ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.07.2014թ.
221-ի 3

Գավառ համայնքի ղեկավար
պարոն Գուրգեն Մարտիրոսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մարտիրոսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Գավառ համայնքի ղեկավարի քաղաքապետի 2014թ.-ի 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը եւ յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը,
2. Գավառ համայնքի՝ 2010, 2011, 2012, 2013թ.-ի եւ 2014թ.-ի 1-ին կիսամյակի բյուջեների կատարման հաշվետվությունները,
3. 2014թ.-ի 1-ին կիսամյակում Գավառ քաղաքում ասֆալտապատման աշխանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը,
4. Գավառ քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը:
5. Գավառի Հրապարակի վերակառուցման ծրագրի համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը՝ ըստ փոխանցումների,
6. Գավառի Հրապարակը վերակառուցելու համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը,
7. 2013-2014 թթ. Հացառատ թաղամասում ծախսված գումարների հաշվետվությունը,
8. Գավառագետի մաքրման աշխատանքների համար համայնքային բյուջեից 2010-2014թ.թ.-ի ընթացքում ծախսված գումարները՝ ըստ տարիների եւ փոխանցումների:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան